ԵՐԲ ԴՈՒՐՍ ԵՍ ԳԱԼԻՍ ՏՆԻՑ

Աստծո հետ օրը 24 ժամ
Մաս 2

Խնդիրը: բաժան - բաժան անել հավատքը

Բացականչիր փառաբանության խոսքեր
Զգա Աստծո կողմից քեզ տված արժեքը
Պահիր Աստծո խոսքը սրտիդ ու մտքիդ մեջ
Խոսիր Աստծու հետ աղոթքով

Ապրեմ հավատքի կյանքը – գործի դնել հավատքը

«Ուրեմն՝ իրենց պտուղից կճանաչեք նրանց։» Մատթեոս 7:20

«Նրա փառքի զորությամբ ամբողջովին զորացած՝ ամեն համբերություն և համառություն կցուցաբերեք հալածանքների հանդեպ ուրախությամբ։» Կողոսացիներին 1:11

24 ժամ հավատքի ապրելու գաղտնիքը - զգալ թե ե՞րբ եմ ցած դնում հավատքս

«Ինքներդ ձեզ քննե՛ք, թե հավատի մե՞ջ եք։ Ինքներդ ձեզ փորձե՛ք։ Կամ չգիտե՞ք, որ Հիսուս Քրիստոսը ձեր մեջ է. միայն եթե չեք ձախողվել փորձելու մեջ։» Բ Կորնթացիներին 13:5

- **Ազնվությունը պայման է**

«Ես գիտեմ, ո՛վ իմ Աստված, որ դու քննում ես սրտերը և սիրում ես ուղղամտությունը.» Ա Մնացորդաց 29:17

«Տիրոջ առաջ զզվելի են ծուռ սիրտ ունեցողները, բայց նրան հաճելի են պարկեշտ ճանապարհի տերերը։» Առականեր 11:20

- **Դրամի խնդիր կա ներգրավված**

«Արծաթասիրությունը բոլոր չարիքների արմատն է, որին ձգտելով՝ ոմանք հավատից մոլորվեցին ու իրենք իրենց բազում ցավեր պատճառեցին։» Ա Տիմոթեոսին 6:10

«Դրամ սիրողը դրամից չի կշտանա, և ոչ էլ հարստություն սիրողը՝ շահույթից։ Սա էլ է ունայնություն։» Ժողովող 5:10

- **Երբ քայլերը արագանում են**

Բաժնեկցիր հավատքդ – հավատքի արտահայտություն

«Թող ձեր լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է։» Մատթեոս 5:16

- **Եղիր ինքդ (մի կեղծիր ինքնությունդ)**

«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ։» Բ Կորնթացիներին 5:17

- **Եղիր լսող**

«Հավատը, որ սիրով է գործում։» Գաղատացիներին 5:6

- **Եղիր վստահ**

«Տիրոջ խոսքը ձեր կողմից հռչակվեց .... ամենուրեք սփռվեց ձեր հավատն առ Աստված, այնպես որ այդ մասին ասելը հարկ չենք համարում։» Ա Թեսաղոնիկեցիներին 1:8

Հաջորդ Քարոզի Թեման

ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐ

Հովիվ Սարօ Խաչիկեան